«ԳՈՐԻՍ ՕՓԵՆ»

Կայծակնային շախմատի միջազգային մրցաշար

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

24 նոյեմբերի 2026թ.

Ս.թ. նոյեմբերի 24-ին, 17:00-ին Հայաստանի շախմատի ակադեմիան կազմակերպում է **«Գորիս Օփեն»** շախմատի միջազգային մրցաշարի շրջանակում կայծակնային շախմատի միջազգային հաշվարկով մրցաշար, որը տեղի կունենա Գորիս քաղաքի «BMG Hotel»-(Գուսան Աշոտ 33):

Մրցաշարը կանցկացվի շվեյցարական մրցակարգով, 9 խաղափուլով՝ ՖԻԴԵ-ի շախմատի կանոնների համաձայն:

Ժամակարգ

3 րոպե ամբողջ պարտիայի համար՝ յուրաքանչյուր քայլի համար 2 վայրկյան հավելումով՝ սկսած առաջին քայլից:

Մրցաշարի ընդհանուր մրցանակային ֆոնդը կազմում է մուտքավճարների 70%-ը:

Բլից մրցաշար	
Հիմնական մրցանակներ	**Հատուկ մրցանակներ**
I	Լավագույն արդյունք ցույց տված շախմատիստուհի
II	Մինչև 10 տարեկան պատանի
III	Մինչև 10 տարեկան աղջիկ
IV	Մինչև 12 տարեկան պատանի
V	Մինչև 12 տարեկան աղջիկ
	Լավագույն արդյունք ցույց տված 50+ վետերան շախմատիստ
	Սյունիքի մարզի լավագույն արդյունք ցույց տված մինչև 18տ. շախմատիստ
	Մինչև 2000 միջազգային բլից վարկանիշ ունեցող շախմատիստ

Բոլոր մրցանակները հարկվելու են ՀՀ հարկային օրենսգրքի համաձայն:

Հավասար միավորներ վաստակելու դեպքում մրցանակային տեղերը որոշվում են ըստ՝

ա) հատված Բուխհոլցի (-1) գործակցի,
բ) Բուխհոլցի գործակցի,
գ) ըստ անձնական հանդիպման (հանդիպումների) արդյունքի
դ) ըստ սև գույնի խաղաքարերով խաղացած պարտիաների առավելագույն քանակի,
ե) հաղթանակների առավելագույն քանակի:

Մրցանակները չեն կիսվում և բաժանվում են համաձայն մրցաշարային աղյուսակում գրված վերջնական տեղի: Յուրաքանչյուր մասնակից իրավունք ունի ստանալու միայն մեկ մրցանակ: Հիմնական և հատուկ մրցանակների հավասարության դեպքում մասնակցին կտրվի հիմնական մրցանակը:

Մուտքավճարներ

Մասնակիցներ	Բլից մրցաշար
ՄԳ, ԿՄԳ	Անվճար
2000-ից բարձր **միջազգային բլից** վարկանիշ ունեցող շախմատիստներ	**5 000**
Մինչև 2000 **միջազգային բլից** վարկանիշ ունեցող շախմատիստներ	**6 000**
Միջազգային բլից վարկանիշ **չունեցող**	**8 000**

*Սյունիքի մարզի շախմատիստների համար մուտքավճարները կզեղչվեն 50%-ով:
*Մուտքավճարների ետ վերադարձի դեպքում կկատարվի 20% պահում:

Գրանցման կարգ

Գրանցման վերջնաժամկետն է նոյեմբերի 23-ը ժամը 18:00-ն:
Մասնակցության վճարները կարող եք փոխանցել ներքոնշյալ հաշվեհամարին: Փոխանցում կատարելիս նպատակ դաշտում նշել մրցաշարը, մասնակցի անունը, ազգանունը, հայրանունը, ծննդյան տվյալները, վարկանիշը և կոնտակտային հեռախոսահամար:

Բանկային տվյալներ
Շահառու՝ Հայաստանի շախմատի ակադեմիա հիմնադրամ
Բանկ՝ Ամերիաբանկ ՓԲԸ;
Հ/հ՝ 1570018417800100;
ՀՎՀՀ՝ 02560522

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ
****Վճարումը կատարելուց հետո պարտադիր է կտրոնը ներկայացնել կազմակերպիչներին կամ ուղարկել WhatsApp-ի միջոցով՝ + 374 43 44 84 73:**

Մրցաշարի կազմակերպչական հարցերով դիմել՝

Հայաստանի շախմատի ակադեմիա
Հասցե՝ Շևչենկո 34, ք. Երևան, 0050, ՀՀ
Պաշտոնական կայքէջ՝ www.chessacademy.am
Էլ.հասցե՝ **tournaments@chessacademy.am**

Հեռ.՝ +374 10 44 84 73

Բջջ.՝ +374 43 44 84 73, +374 91 19 25 14

Մրցաշարի տնօրեն
Վարդուհի Սարգսյան